# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

29 հունիսի 2020 թվականի թիվ 22

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 29-ի թիվ 4 նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 108-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրյան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շահագործման հանձնված տեխնիկայի վարձակալությամբ տրամադրելու վարձավճար սահմանելու մասին
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 15-ի թիվ 16 որոշման մեջ լրացում կատարելու մասին
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020թվականի ապրիլի 15-ի թիվ 11-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի նշանակության հողերից աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու, օտարման մեկնարկային գին եվ պայմաններ հաստատելու մասին /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի վարչական սահմաններում գտնվող ջրային նպատակային նշանակության 08-007-0159-0002 կադաստրային ծածկագրով հողամասը արդյունաբերության, ընդերքօգտագործման եվ այլ արտադրական նշանակության պահեստարանների հողերի գործառնական նշանակության փոխադրելու մասին /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Արեվիկ գյուղի տարածքում գտնվող շինության սպասարկման նպատակով հողամասը վաճառելու մասին /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքը անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով «Գյումրիի Սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրելու մասին /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/
9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական սահմաններում գտնվող /բնակավայր Արեվիկ/, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում քաղաքացի Կարեն Կարլենի Գոմցյանի կողմից ինքնակամ կառուցված,օրինական ճանաչված եվ համայնքի սեփականությունը համարված արտադրական նպատակային նշանակությամբ շինությունները եվ նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով կառուցապատողին վաճառելու համար համաձայնություն տալու մասին /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Ա.Իգիթյան/

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝ Կողմ -10, Դեմ -0, Ձեռնպահ -0

| | | | |
|---|---|---|---|
| ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԳԱԲՈՅԱՆ ԺԻՐԱՅՐ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ | ------------------ | ------------------ | ------------------ |

| | | | |
|---|---|---|---|
| ԷԼԲԱԿՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ | ------------------ | ------------------ | ------------------ |

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

29 հունիսի 2020թվական
գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

29 հունիսի 2020 թվականի թիվ 23-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 108-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34- րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջարկը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 108-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Բաժին 11 Խումբ 1 Դաս 2 «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» ծրագրի «10438.9» հազար դրամ թիվը փոխարինել «10243.8» հազար դրամ թվով, այդ թվում՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների.
1) «Պահուստային միջոցներ» 4891 հոդվածի «10438.9» հազար դրամ թիվը փոխարինել «10243.8» հազար դրամ թվով,
2) «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» 4111 հոդվածի «0» դրամ թիվը փոխարինել «195.1 հազար դրամ» թվով և բառերով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան
համայնքի ավագանու անդամներ՝ Կողմ -10, Դեմ -0, Ձեռնպահ -0

| | | | |
|---|---|---|---|
| ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԳԱԲՈՅԱՆ ԺԻՐԱՅՐ | ------------------ | ------------------ | ------------------ |

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ------------------ ------------------ ------------------

ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ------------------ ------------------ ------------------

ԷԼԲԱԿՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ ------------------ ------------------ ------------------

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ------------------ ------------------ ------------------

ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ ------------------ ------------------ ------------------

ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ------------------ ------------------ ------------------

ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ ------------------ ------------------ ------------------

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ ------------------ ------------------ ------------------

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

29 հունիսի 2020թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
29 հունիսի 2020 թվականի թիվ 24

## ՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՎԱԾ ՏԵԽՆԻԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջարկը՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրյան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շահագործման հանձնված տեխնիկան վարձակալությամբ տրամադրելու դեպքում սահմանել վարձավճարի չափ ըստ տեխնիկաների.

   1) Բազմաֆունկցիոնալ էքսկավատոր JCB 3cxeco. 1 ժամը՝ 13000 ՀՀ դրամ, 1 օրը՝ 100000 ՀՀ դրամ
   2) Բազմաֆունկցիոնալ էքսկավատոր CAT 426F2 1 ժամը՝ 13000 ՀՀ դրամ, 1 օրը՝ 100000 ՀՀ դրամ
   3) Գրեյդեր ԳՍ -10.07 1 ժամը՝ 10000 ՀՀ դրամ, 1 օրը՝ 80000 ՀՀ դրամ
   4) Ինքնաթափ մեքենա 15 տոննա տարողությամբ ԿԱՄԱԶ65-115-026 1 ժամը՝ 10000 ՀՀ դրամ /տեղում աշխատելու դեպքում/, 1 կմ՝ 300 ՀՀ դրամ
   5) Ինքնաթափ մեքենա 4,5 տոննա տարողությամբ ԳԱԶ 33098 1 ժամը՝ 7000 ՀՀ դրամ /տեղում աշխատելու դեպքում/, 1 կմ՝ 250 ՀՀ դրամ
   6) Աղբատար ինքնաթափ մեքենա ԳԱԶՍԱԶ 3507 1 ժամը՝ 5000 ՀՀ դրամ, 1 օրը՝ 50000 ՀՀ դրամ
   7) Ջրատար՝ ջրցան ԶԻԼ 130 1 ժամը՝ 6000 ՀՀ դրամ, 1 օրը՝ 60000 ՀՀ դրամ
   8) Ավտոփերելակ NISAN ATLEON 70.14 1 ժամը՝ 4000 ՀՀ դրամ, 1օրը՝ 30000 ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Արծրունի Իգիթյանին.
   սահմանել ֆիզիկական և իրավաբանական անձանց վարձակալությամբ տեխնիկա տրամադրելու կարգն ու ժամկետները այն հաշվով որպեսզի տեխնիկաների վարձատրման գործընթացը բացասական չանդրադառնա «Ախուրյանի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության առօրյա աշխատանքային ծրագրերի վրա:
3. Իրավունք վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Արծրունի Իգիթյանին վարձակալության պայմաններից և իրավիճակից ելնելով երկկողմանի պայմանագրերում մշակել հատուկ դրույթներ:
4. Հաշվի առնել տվյալ պահին վառելանյութի շուկայական գնի փոփոխությունը:
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակիչներին տեխնիկան տրամադրել 20 տոկոս զեղչով:
6. Յուրաքանչյուր եռամսյակ բյուջեի կատարման հաշվետվության հետ ներկայացնել նաև հաշվետվություն վարձակալած տեխնիկայի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝ Կողմ -10, Դեմ -0, Ձեռնպահ -0

| | | | |
|---|---|---|---|
| ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ԳԱԲՈՅԱՆ ԺԻՐԱՅՐ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ԷԼԲԱԿՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ | ---------------- | ---------------- | ---------------- |

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

29 հունիսի 2020թվականի
գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

29 հունիսի 2020 թվականի թիվ 25-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐ ԱՐԵՎԻԿ/ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի /բնակավայր Արևիկ / սեփականությունը հանդիսացող տեխնիկան (հետագայում՝ գույք) օտարել աճուրդով:
2. Հիմք ընդունելով որոշման 1-ին կետում նշված գույքի շուկայական արժեքի որոշման վերաբերյալ <<Ա. Գ. ԷՍԹԵՅԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (Վկայական՝ N ԱԳԳ 227 տրված՝ «21» փետրվարի 2018 թվական) հաշվետվությունները՝ գյուղատնտեսական տեխնիկաների շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ՝ աճուրդով օտարման մեկնարկային գինը հաստատել համաձայն թիվ 1 հավելվածի:
3. Հաստատել աճուրդի կանոնակարգը և աճուրդի մասին հրապարակային ծանուցման հայտարարության տեքստը համաձայն թիվ 2 և թիվ 3 հավելվածների:
4. Աճուրդը կազմակերպելու նպատակով՝
   ա) ստեղծել աճուրդային հանձնաժողով հետևյալ անհատական կազմով՝

**հանձնաժողովի նախագահ՝**
Արծրունի Իգիթյան - համայնքի ղեկավար,
**հանձնաժողովի անդամներ՝**
Լիպարիտ Տիգրանյան -համայնքի ղեկավարի տեղակալ
Վարդգես Մելքոնյան - Արևիկ բնակավայրի վարչական ղեկավար
Արամայիս Մքոյան - համայնքի ավագանու անդամ
Վոլոդյա Էլբակյան - համայնքի ավագանու անդամ
բ) աճուրդավար հաստատել հանձնաժողովի անդամ, համայնքի ղեկավարի տեղակալ Լիպարիտ Տիգրանյանին, արձանագրող՝ հանձնաժողովի անդամ, համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Աբրահամյանին:

5. «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հանձնաժողովին վերապահել հրապարակային սակարկություն կազմակերպելու լիազորություն (աճուրդի կազմակերպիչ):
6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 15 ապրիլի 2020 թվականի թիվ 16 «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի /բնակավայր Արեվիկ/ սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկան աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին» որոշումը:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝ Կողմ -10, Դեմ -0, Ձեռնպահ -0

| | | | |
|---|---|---|---|
| ԲԱԲՈՒՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ | ------------------- | ------------------- | ------------------- |
| ԳԱԲՈՅԱՆ ԺԻՐԱՅՐ | ------------------- | ------------------- | ------------------- |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ | ------------------- | ------------------- | ------------------- |
| ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ | ------------------- | ------------------- | ------------------- |
| ԷԼԲԱԿՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ | ------------------- | ------------------- | ------------------- |
| ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ | ------------------- | ------------------- | ------------------- |
| ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ | ------------------- | ------------------- | ------------------- |
| ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ | ------------------- | ------------------- | ------------------- |
| ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ | ------------------- | ------------------- | ------------------- |

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ ------------------------ -------------------- ---------------------

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

29 հունիսի 2020թվական
գյուղ Ախուրյան

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ավագանու 2020թվականի
29-ի հունիսի թիվ 25-Ն որոշման

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն համարվող, Արևիկ գյուղում գտնվող, գյուղատնտեսական տեխնիկայի աճուրդ-վաճառք**

| | Գտնվելու վայրը, անվանումը | Տեխնիկայի անվանումը | Տարեթիվը | Քանակը | Մեկնարկային գինը /շուկայական արժեքը/ ՀՀ դրամ | Ծանոթություն Տեխնիկական վիճակը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ.Արևիկ | ՄՏՁ-82 մակնիշի տրակտոր | 1989 | 1 | 405000 | Բավարար, Էական մաշվածության |
| 2 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գ.Արևիկ | ՊԹՎ-1 մակնիշի Էքսկավատոր | 1988 | 1 | 350000 | Բավարար, Էական մաշվածության |
| 3 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գ.Արևիկ | Տ-70Ս մակնիշի տրակտոր | 1989 | 1 | 355000 | Բավարար, Էական մաշվածության |
| 4 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գ.Արևիկ | ԴՏ-75Մ մակնիշի տրակտոր | 1988 | 1 | 355000 | Բավարար, Էական մաշվածության |
| 5 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գ.Արևիկ | ԴՏ-75Մ մակնիշի տրակտոր | 1988 | 1 | 255000 | Բավարար, Էական մաշվածության |
| 6 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գ.Արևիկ | Հացահատիկի շարքացան | 1980 | 1 | 11500 | Ապակոմպլեկտավորված, շահագործման ոչ պիտանի |
| 7 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գ.Արևիկ | Հացահատիկի շարքացան | 1990 | 1 | 210000 | Բավարար, Էական մաշվածության |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գ.Արևիկ | ՍԿ-5 Նիվա մակնիշի կոմբայն | 1988 | 1 | 600000 | Բավարար, էական մաշվածության |
| 9 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գ.Արևիկ | ՍԿ-5 Նիվա մակնիշի կոմբայն | 1985 | 1 | 120000 | Անսարք, ապակոմպլեկտավորված |
| 10 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գ.Արևիկ | ՍԿ-5 Նիվա մակնիշի կոմբայն | 1989 | 1 | 710000 | Բավարար, էական մաշվածության |
| 11 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գ.Արևիկ | ՅՈՒՄԶ-6լ մակնիշի տրակտոր | 1989 | 1 | 405000 | Բավարար, էական մաշվածության |
| 12 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գ.Արևիկ | ՅՈՒՄԶ-6լ մակնիշի տրակտոր | 1987 | 1 | 310000 | Բավարար, էական մաշվածության |
| 13 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գ.Արևիկ | Կարտոֆիլի կուլտիվատոր | 1980 | 1 | 115000 | Բավարար, էական մաշվածության |
| 14 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գ.Արևիկ | Կարտոֆիլ քանդող գործիք | 1980-1990 | 1 | 110000 | Բավարար, էական մաշվածության |
| 15 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գ.Արևիկ | Կարտոֆիլի շարքացան | 1989 | 1 | 345000 | Բավարար, էական մաշվածության |
| 16 | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք, գ.Արևիկ | Ե- 281 մակնիշի կոմբայն | 1990 | 1 | 615000 | Բավարար, էական մաշվածության |

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավար՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

Հավելված թիվ 2

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ավագանու
2020 թվականի հունիսի 29-ի թիվ 25-Ն որոշման

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐ ԱՐԵՎԻԿ/ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կանոնակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի /բնակավայր Արևիկ/ սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկայի (հետագայում՝ գույք) աճուրդի միջոցով օտարման աճուրդային հանձնաժողովի գործունեության կանոնները:

2. Աճուրդի կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները՝ ի դեմս համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի /բնակավայր Արևիկ/ սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկան աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 25-Ն որոշմամբ ստեղծված աճուրդային հանձնաժողովը՝ հետևյալ անհատական կազմով՝

**հանձնաժողովի նախագահ**՝

Արծրունի Իգիթյան - համայնքի ղեկավար,

**հանձնաժողովի անդամներ՝**

Լիպարիտ Տիգրանյան -համայնքի ղեկավարի տեղակալ

Վարդգես Մելքոնյան - Արևիկ բնակավայրի վարչական ղեկավար

Արամայիս Մքոյան - համայնքի ավագանու անդամ

Վոլոդյա Էլբակյան - համայնքի ավագանու անդամ

բ) աճուրդավար հաստատել հանձնաժողովի անդամ, համայնքի ղեկավարի տեղակալ Լիպարիտ Տիգրանյանին, արձանագրող՝ հանձնաժողովի անդամ, համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Աբրահամյանին:

3.Հանձնաժողովը ղեկավարվում է <<Հրապարակային սակարկությունների մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի /բնակավայր Արևիկ/ սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկան աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 25-Ն որոշմամբ, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

## II . ԱՃՈՒՐԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Աճուրդը անցկացնել սակարկությունների ձևով, որի ընթացքում հաղթող ճանաչել այն մասնակցին, որն աճուրդի դրված գույքի համար առաջարկել է առավելագույն բարձր գին:

5. Աճուրդը անցկացնել 2020 թվականի հուլիսի 29-ին, ժամը 12-00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան գյուղում՝ համայնքապետարանի շենքում (Հասցե՝ Ախուրյան համայնք, գ.Ախուրյան, Գյումրու խճուղի շենք 42):

6. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է նվազագույնը 2000 տպաքանակ ունեցող մամուլում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն 20 օր առաջ:

7. Աճուրդի հրապարակային ծանուցման մասին հայտարարությունը աճուրդի անցկացման վայրում և համայնքի մարդաշատ այլ վայրերում տեղադրվում է աճուրդի կայացման օրվանից առնվազն 15 օր առաջ: Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ տեղադրվում է աճուրդի կայացման վայրում:

8. Հրապարակային սակարկությունների մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները:

9. Հրապարակային սակարկություններին չեն կարող մասնակցել՝

1) աճուրդային հանձնաժողովի անդամները (աճուրդի կազմակերպիչ),

2) համայնքի ավագանու անդամները,

3) աճուրդավարի երեխաները, ծնողները, ամուսինը, տատը, պապը, եղբայրները և քույրերը, ինչպես նաև աճուրդավարի ամուսնու ծնողները, տատը, պապը, եղբայրները և քույրերը:

10. Աճուրդի մասնակցության վճարի չափը սահմանված է 2000 (երկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

11. Աճուրդին կարող են ներկա գտնվել աճուրդի մասնակից չհամարվող այլ անձինք (հետագայում դիտորդ), ովքեր վճարել են մուտքի տոմսի վճարը:

12. Դիտորդների համար մուտքի տոմսի վճարի չափը սահմանվում է 1000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

12. Աճուրդի մասնակիցները և Դիտորդները, աճուրդի դահլիճում զբաղեցնում են առանձին տեղեր:

13. Աճուրդի մասնակիցները և Դիտորդները պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին՝

1) չհայտնել իրենց դժգոհությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, աճուրդային հանձնաժողովի կամ աճուրդավարի նկատմամբ,

2) չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն պայմաններով սահմանված դեպքերի,

3) հարցադրումներ ուղղել աճուրդային հանձնաժողովի նախագահին լոտի աճուրդը սկսվելուց առաջ կամ հետո, իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ,

4) աճուրդի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ չվերադառնալ դահլիճ,

5) չթաքցնել աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը:

14. Աճուրդի դրված գույքի մեկնարկային գինը հաստատված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 29 հունիսի 2020 թվականի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի /բնակավայր Արևիկ/ սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկան աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու

մասին» թիվ 25-Ն որոշմամբ, համաձայն որի՝ աճուրդի դրված գույքի մեկնարկային գինը սահմանված է գյուղատնտեսական տեխնիկաների շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ <<Ա. Գ. ԷՍԹԵՅԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (Վկայական՝ N ԱԳԳ 227 տրված՝ «21» փետրվարի 2018 թվական) հաշվետվություններով:

16. Աճուրդի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն հավելման չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

17. Աճուրդի նախավճարի չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, որի վճարումից հետո աճուրդի մասնակցին տրամադրվում է <<Աճուրդի մասնակցի վկայական>>:

18. Աճուրդի կանխավճարը և մուտքի վճարը վճարվում են աճուրդի կազմակերպչին:

19. Աճուրդում հաղթած է համարվում աճուրդի այն մասնակիցը, ով աճուրդավարի մուրճիկի երրորդ հատվածից հետո ներկայացրել է ամենաբարձր գնային հայտ:

20. Աճուրդի դրված գույքի ուսումնասիրման համար ժամկետ է սահմանվում կանոնակարգը հաստատելու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 2020թվականի հուլիսի 7-ից մինչև հուլիսի 28-ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 10:00-ից մինչև 17:00-ն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Արևիկ գյուղում:

21. Աճուրդի կանոնակարգին ծանոթացումը և լուսապատճեի տրամադրումը կատարվում է Ախուրյանի համայնքապետարանում՝ կանոնակարգը հաստատելու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, 2020 թվականի հուլիսի 7-ից մինչև հուլիսի 28-ը՝ ժամը $9^{00}$-ից մինչև $17^{00}$-ն:

22. Աճուրդը սկսվելուց մեկ ժամ առաջ աճուրդային հանձնաժողովը (աճուրդի կազմակերպիչ) իր նիստում գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը և իր որոշմամբ թույլատրում է մասնակցել աճուրդին:

23. Աճուրդի արդյունքների մասին աճուրդի անցկացնելու օրը կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են՝ աճուրդային հանձնաժողովի ներկա անդամները և աճուրդի հաղթող մասնակիցը:

24. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան գույքի վերաբերյալ առք ու վաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:

25. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում է աճուրդի կայացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

26. Գույքի ամբողջ գնի վճարումը գնորդի կողմից կատարվում է աճուրդի կայացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը:

27. Սահմանված ժամկետներում առք ու վաճառքի պայանագիրը չկնքելու և /կամ/ գույքի գինը չվճարելու դեպքում վճարված նախավճարը չի վերադարձվում և փոխանցվում է համայնքի բյուջե:

28. Գույքի առք ու վաճառքի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի կողմից:

29. Աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում չհաղթած մասնակցին վերադարձվում է նախավճարը:

30. Աճուրդի մասնակցության հայտերն ընդունվում են Ախուրյանի համայնքապետարանում՝ աճուրդային հանձնաժողովի կողմից կանոնակարգը հաստատելու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, 2020 թվականի հուլիսի 7-ից մինչև հուլիսի 28-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 10:00-ից մինչև 17:00-ն:

31. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են ՝

1) հայտ՝ սահմանված ձևանմուշով,
2) ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճեն,
3) իրավաբանական անձանց և համայնքների համար՝ ձեռնարկության հիմնադիր փաստաթղթերի պատճենները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը,
4) նախավճարի մուծման անդորրագիրը:

32. Աճուրդային հանձնաժողովը աճուրդի արդյունքների վերաբերյալ կազմված եզրակացությունը մեկ օրվա ընթացքում ներկայացնում է համայնքի ղեկավարին:

33.Աճուրդում վաճառված գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման:

34. Աճուրդը համարվում է չկայացած եթե.
1) Աճուրդին ներկայացել է միայն մեկ գնորդ կամ չի ներկայացել որևէ գնորդ:
2) աճուրդի ընթացքում վաճառվող գույքի նախնական գնի հավելում չի կատարվել:
3) աճուրդում հաղթած անձը չի մուծել գնման գինը:

35. Աճուրդը հայտարարվում է չկայացած աճուրդային հանձնաժողովի որոշմամբ՝ ոչ ուշ քան նշված հանգամանքները ի հայտ գալու հաջորդ օրը:

36. Աճուրդը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում կրկնական աճուրդը կազմակերպում և անցկացնում է չկայացած աճուրդից ոչ ուշ քան 10 օրացուցային օր հետո: Կրկնական աճուրդը կազմակերպում և անցկացնում է աճուրդային հանձնաժողովը՝ սույն կանոնակարգի և /կամ/ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով:

37. Վերոհիշյալ կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր: Աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

38. Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

## III . ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

39. Աճուրդային հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

40. Նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների սահմանված թվի կեսից ավելին:

41. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

42. Աճուրդավարը և արձանագրողը հաստատվում են համայնքի ավագանու կամ աճուրդային հանձնաժողովի որոշմամբ:

43. Աճուրդային հանձնաժողովը դադարեցնում է իր լիազորությունները՝ աճուրդը կայացած ճանաչվելու, աճուրդի կայացման մասին արձանագրությունը ստորագրելու և համայնքի ղեկավարին աճուրդի արդյունքների վերաբերյալ համապատասխան եզրակացություն ներկայացնելուց հետո:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

Հավելված թիվ 3

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ավագանու
2020 թվականի հունիսի 29-ի թիվ 25-Ն որոշման

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**Աճուրդի մասին հրապարակային ծանուցման**

***1. Աճուրդի անցկացման օրը***՝ 2020 թվականի հուլիսի 29-ին, ժամը 12-00-ին:
***2.Աճուրդի կազմակերպիչը***՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքապետարան, ի դեմս աճուրդային հանձնաժողովի (աճուրդի կազմակերպիչ):
***3.Աճուրդի անցկացման վայրը /հասցեն/ '***
ՀՀ Շիրակի մարզ,համայնք Ախուրյան, գյուղ Ախուրյան Գյումրու խճուղի շենք 42 (համայնքապետարանի շենք):
***4.Աճուրդի ձևը և անցկացման կարգը՝*** դասական եղանակ՝ մեկնարկային գնի բարձրացմամբ, որի ընթացքում հաղթող է ճանաչվում աճուրդի այն մասնակիցը, որն աճուրդի դրված գույքի համար առաջարկել է առավելագույն բարձր գին:
***5. Աճուրդի դրված գույքի /լոտ/ նկարագրությունը***

| ***Գույքի անվա-նումը*** | ***Գույքի սեփականա-տերը*** | ***Գույքի տեխնիկական տվյալները*** | ***Գույքի տեխնիկական վիճակի նկարագրությունը*** | ***Գույքի մեկնար-կային գինը /ՀՀ դրամ/*** |
|---|---|---|---|---|
| ՄՏԶ-82 մակնիշի տրակտոր | ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Արևիկ | ՄՏԶ-82 մակնիշի տրակտոր, գործարանային համարը ՝ 266681 թողարկման տարեթիվը՝ 1989թ. | Տեխնական վիճակը՝ էական մաշվածությամբ, առկա են անսարքություններ ընթացքային մասի , հիդրոհամակարգի հանգույցներում, շարժիչը նորոգման կարիք ունի: Ընդհանուր տեխնիկական վիճակի գնահատականը՝ բավարար: Արտաքին տեսքի վիճակի գնահատականը՝ միջին: | 405000 /չորս հարյուր հինգ հազար/ |
| ՊԹՎ-1 մակնիշի էքսկավատոր | ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Արևիկ | ՊԹՎ-1 մակնիշի էքսկավատոր թողարկման տարեթիվը՝ 1988թ. | Տեխնական վիճակը՝ էական մաշվածությամբ, առկա են անսարքություններ ընթացքային մասի , հիդրոհամակարգի հանգույցներում, շարժիչը հիմնանորոգման կարիք ունի: Ընդհանուր տեխնիկական վիճակի գնահատականը՝ բավարար: Արտաքին տեսքի վիճակի գնահատականը՝ միջին: | 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ |
| Տ-70Ս մակնիշի տրակտոր | ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Արևիկ | ԴՏ-75մ մակնիշի տրակտոր, գործարանային համարը ՝ 002516 թողարկման տարեթիվը՝ 1989թ | Տեխնական վիճակը՝ էական մաշվածությամբ, առկա են անսարքություններ ընթացքային մասի, շարժիչը հիմնանորոգման կարիք ունի: Ընդհանուր տեխնիկական վիճակի գնահատականը՝ բավարար: Արտաքին տեսքի վիճակի գնահատականը՝ միջին: | 355000 /երեք հարյուր հիսունհինգ հազար/ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ԴՏ-75մ մակնիշի տրակտոր | ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Արևիկ | ԴՏ-75մ մակնիշի տրակտոր, գործարանային համարը ՝ 104097 թողարկման տարեթիվը՝ 1988թ | Տեխնական վիճակը՝ էական մաշվածությամբ, առկա են անսարքություններ ընթացքային մասի , հիդրոհամակարգի հանգույցներում շարժիչը հիմնանորոգման կարիք ունի: Ընդհանուր տեխնիկական վիճակի գնահատականը՝ բավարար: Արտաքին տեսքի վիճակի գնահատականը՝ միջին: | 355000 /երեք հարյուր հիսունհինգ հազար/ |
| ԴՏ-75մ մակնիշի տրակտոր | ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Արևիկ | ԴՏ-75մ մակնիշի տրակտոր, թողարկման տարեթիվը՝ 1988թ | Տեխնական վիճակը՝ էական մաշվածությամբ, առկա են անսարքություններ ընթացքային մասի , հիդրոհամակարգի հանգույցներում շարժիչը հիմնանորոգման կարիք ունի,բացակայում են թրթուրավոր շղթաները; Ընդհանուր տեխնիկական վիճակի գնահատականը՝ բավարար: Արտաքին տեսքի վիճակի գնահատականը՝ միջին: | 255000 /երկու հարյուր հիսունհինգ հազար/ |
